

Հայոց Աստրախանայ, եւ համաժայն կարգաւորու-
թեան իւրոյ ետ կտակակատարի հանգուցելոյն պարոն
փառայեանցի զապահովութիւնըն վասն ստացման բոլոր
գումարաց պատշաճաւոր վաւերացուցմամբ. իսկ առ
ի յաւերժացուցանել զյիշատակ անուան հանգու-
ցեալ Յարութիւնի փութարդեանց՝ կարգաւորեաց,
մշանջնաւորապէս ունել ի միջի դպրոցաց զմի ա-
շակերտ ի զասակարգէ համազգի չքաւորաց, հոգա-
լով զուսումն եւ զուսումնական պիտոյս նորա ի
հաշիւ նոյն գումարի, անուանելով զուսանողն զայն
«Սան հանգուցեալ փութարդեանցի»:

Ի վերայ այսր ամենայնի Հոգարարծութիւն Գլխ-
րոցաց դարձուցեալ զուշադրութիւն իւր որպէս ի
բարեպաշտական ազգասիրութիւն ջերմեռանդ կտա-
կարարի հանգուցեալ Յարութիւնի Փուրվարդեանց,
նոյնպէս եւ ի յարդար կատարումն կամաց ի կտակա-
կատար Աստրախանցի մերազնեայ Արրահամէ Գլ-
րիգորեան պարոն Փասոյեանց, խոնարհաբար խնդրէ
ի եմբագրութենէդ, տպագրութեամբ յէջս Արարատ
ամալգրոյ հրատարակել զայսմանէ յընդհանուր տե-
ղեկութիւն համազգայնոց ամենից՝ ի յոյց բաւականու-
թեան եւ զոհունակութեան ի զիմաց հոգարարծական
վարչութեան:

Հոգաբարձուք Յովսէփ Ա. Քաչանայ բռնկաթեանց
Սիմէօն Պօպօլեանց
Մեքայէէ բուրջալեանց:

Համար 29.

b 50 U. 77222 *) 1877 - 2,

U. m. p. m.

Յիշատակն բարերարաց եւ բարեպաշ-
տից օրհնութեամբ եղիլի:

h. θ_{LULh} .

ከታችኛው-ፊት ሆኖ ሊጻፍ ይችላል፡

Նորին Ղեհափառ Օծութեան Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց օծման տաաներորդ տարեկարծին պատճառաւ իրիստ փառաւոր եւ մեծաշուք հան-

դէս կատարեցաւ Թէլաւու սուրբ Գէորգ աւագ եկեղեցուն: Քարծրահէլեն զանգակներն բոլոր Հայոց եկեղեցեաց քաղաքիս դարձուցին ուշադրումիւն ամենայն Հայ ժողովրդականաց, որք խուռն բազմութեամբ ժողովեցան աւագ եկեղեցին: Ա՛յ թէ միմիայն Հայազգի աստիճանաւորք, պատուելի քաղաքացիք եւ արհեստապետք, այլ եւ բազմութիւն օտար ազգաց դիմեցին յեկեղեցի տեսանել շքեղութիւն հանդիսին: Մեծ Հոգաբարձուք երկուց սեռից ուսումնարանաց Հայոց եւ բոլոր վարժապետք եւ վերակացուք դասաւորեալ կարգաւ ընդ աշակերտաց Ս. Վարդանեան եւ աշակերտուհեաց Ս. Գայիանեան հոգեւոր ղալրոցաց մըտին յեկեղեցի եւ կանգնեցան հանդէպ տաճարին ի տես հանդիսավեհ տօնին:

Յ 8 երրորդ ժամուն առաւօտեան ի 21 Մայիսի շա-
բաթ օրն սկսաւ Ս. Պատարազն, զոր մատոյց զոր-
ծակատարն Հայոց Թէլաւի բարիկրօն Գէորդ աւադ
քահանայն Տէր-Սարգսեանց։ Ի ժամ Ս. Պատարա-
զին աշակերտք ընդ ժայնագրադէտ ուսուցչին Ս.
Տէր Սահակեանց ելեալ յատեան երգեցին ծայրա-
գրեալ թուր երգեցողութիւն սրբոյ պատարազին։
Այս կանոնաւոր կերպիւ ներդաշնակ երգեցողու-
թիւնն, որ մեր վեհափառ Կաթողիկոսի ճիգն աշ-
խատանաց պտուղն է, շատ տալաւորեցաւ ժողովըր-
դականաց սրտի մէջ, որք լսեցին օրինաւոր կերպիւ
համղածայն երգեցողութիւն մեր եկեղեցումն։

Յաւարտ Ս. Պատարազլին դասը բահանայից շքեղ զգեստաւորեալք՝ պարադուխ ինքեանց ունելով հանդիսակատար Գէորգ աւագ քահանայն ելին յԱտենն եւ մազմանք կատարեցին: Յաւարտ սրտաշարժ մազմանացն վասն երկար կենաց Վեհափառին հանդիսակատար Գէորգ աւագ քահանայն ելեալ բարձրացաւ ի բեմն եւ ընթերցաւ ըստ պատշաճի մեծահանդէս տօնիս ղեղեցկայաւորմար ճառ բացատրելով զմիտս ճառին ի յուր ամենեցունց:

Ի վերջ ճառին աշակերտք եւ աշակերտուհիք
դաս առ դաս կանգնեալք ի միասին երգեցին զերգս
« ՏԷ՛ր Է՛ր-ը-ՂԷ՛յ- » եւ ապա միւս երգն՝ « Փ-յի-շ-է
Է-ւ-Ք-է-դ-է-ն, Է լ-յ- ճ-է-դ-Ջ-է-վ-է-ն » : Եւ ապա
խումռն բազմութեամբ դասաւորեալ կարգաւ դարձան
յուսուսմարան. ուր եւ արարի ատենախօսութիւն
բազատրեղով մանուկներին այս տոսմամեայ Տարե-

(*) Այս նամակի շատ ուշ հասնումը կախարարութեանս:

դարձի հանդիսի նշանակումը, յիշեցուցանելով Տ. Տ. Գէորգայ Գ Սրբազնազոյն Կաթողիկոսի ազգասիրական զործքերն իւր տասնամեայ Հայրապետութեան ժամանակն. եւ ապա արձակեաց աշակերտս եւ աշակերտուհիս ի պատիւ մեծահանդէս տօնին:

Յերեկոյն կատարեցաւ լուսավառութեան մեծ հանդէս քաղաքիս Ս. Գէորգ աւագ եկեղեցումն:

Ռ. ԵՐԶՆԵՆԱՆՅ ՀԱՂԱՏԵՏԻ.

Ահաւասիկ ընթերցեալ ճառը:

ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ.

Ի մեծահանդէս աւուր տօնիս ինձ միմիայն այժմ վիճակեցաւ ելանել ի հանդէս բանաստեղծութեան առ ի շնորհաւորել ընդ Ձեզ զտասնամեայ Տարեդարձն Օծութեան ի Կաթողիկոսութիւն Հայոց մեծաց Տ. Տ. Գէորգայ Գ. Սրբազնակատար Քահանայապետի, բազմեայ ի Գահ Սրբազան առաքելոցն Թաղդէի եւ Բարդուղիմեայ, եւ մերս սուրբ Լուսաւորչի մեծին Գրիգորի Պարթեւի: Ներեսցի ինձ այժմ ոչ լիակատար, այլ համառօտ բանիւր յիշեցուցանել Ձեզ զկատարեալ մինչեւ ցարդ գործոց մերս Հոգեւոր Քահանայապետի, զորոյ տասնամեայ յաջող տարեդարձն տօնեմք ընդ Ձեզ ի մէջ սուրբ Տաճարիս մեծաւ հանդիսավեհութեամբ:

Նախախնամութիւնն ի սկզբանէ մինչեւ ցարդ պահեալ պահպանէ զՔրիստոսանիմն ուղղափառ եկեղեցի մեր, յարուցանելով քաջարժուն եւ անձնադիր Հովիւս վասն յառաջադիմութեան ազգիս եւ բարեկարգութեան սրբոյ եկեղեցւոյ:

Տօրէ զահակալութեան իւրոյ, Սրբազնակատար Հայրապետն Ազգիս Գէորգ Գ, որպէս քաջ Հովիւ եղեալ զանձն իւր ի վերայ բանաւոր Հօտի իւրոյ, եւ որպէս Ժիր մշակ անպարտելի Կաթողիկէ եկեղեցւոյ քաջարժնութեամբ հսկեալ եւ ցարդ հսկէ ի շինութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի պաշտպանութիւն ուղիղ հաւատոյս նմանապէս անքուն ակամբ եւ ազգասիրական հոգւով պարտաւորեալ միշտ բարեկարգել բանալ զուսումնարանս ընդ ամենայն տեղիս Հայաստանի, եւ զառաջուց հիմնարկեալսն՝ որպիս մարմ է՝ զո՞ն գործէ՝ դիւրին միջոցաւ պահպանել եւ կանոնաւորել, եւ նո-

վաւ բանալ ճանապարհ լուսաւորութեան եւ յառաջընթացութեան ապագայ սերնդոց մերոց, ծնանիլ բարեջան անդամս ազգիս, պահպանել զկարգ եւ զկանոն յեկեղեցիս ի հոգեւորականս եւ ի Ժողովրդականս:

Մարգարէն Դաւիթ իրեւ ընտրեցաւ յԱստուծոյ ի թագաւոր, եւ օծաւ իւղով սրբով, ասէ բանն Աստուածային, Թէ՛ « Հա՛նգէ՛ւ հոգի՛ Տէ՛ւն է Ժէ՛ր, Դաւիթայ յոգի՛ յոյնհա՛նգէ՛ւ Լաւ յաշնոյն »: Եւ այժմ չեղեն ընդունայն բողոքանքս ամենայն Հայոց, չեղին ի դերեւ խնդրուածք ողջոյն եկեղեցւոյ, զի ամենօրհնեալն Աստուած բարձրացոյց զեղջիւր Օծելոյ իւրոյ: Այն սուրբ Հոգին անապառ եւ անղաղար խաղաց ի վերայ Աստուածընտիր Քահանայապետիս մերոյ, եւ շնորհիւ այնր Հոգւոյ հանապազ Նա մատակարարէ մեզ ամենեցունցս հոգիի դիտութեան, հոգիի հեղութեան եւ աստուածպաշտութեան:

Յաւուրս տասնամեայ Հայրապետութեան սորա բացան երկուց սեռից ուսումնարանք ի դաւառս՝ ի նահանգս եւ ի դիւղօրայս Հայաստանի: Աթոռապատկան զանազան շինութիւնքն են կենդանի վկայք խնամատարութեանց Վեհափառին մերոյ: Տպարանն Սրբոյ Էջմիածնի պաշտօնացեալ ծաղկեցաւ, եւ հետզհետէ հին եւ ընտիր մատենադրութիւնք ի լոյս ընծայեցան: Լուսաշաղի Արարատ ամապիրն ի սկզբանէ մինչեւ ցայսօր տարփողէ յականջս Հայկազանց զաղափարս ուսման եւ յառաջադիմութեան: Օծեալն յԱստուծոյ Վեհափառ Կաթողիկոսն մեր Գէորգ Գ, ի Սիօնի Սրբոյ Էջմիածնի կանգնեալ, զորշմեալ ունի ի վեհ ճակատ իւր զազաջէն գործս, եւ բարի նպատակաւ կատարեալգործէ օր ըստ օրէ զսկզբնաւորեալս յօդուտ ազգիս. ի սուրբ երեսաց նորա ելանեն մեզ իրաւունք, եւ աչք մեր տեսանեն զուղղութիւն: Օրինակի համար: Նորակառոյց Գէորգեան ճեմարանն Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի են հրաշալի սխրագործութիւնք Նորին, իւր բարի նպատակաւ: Այս ճեմարան ես ամենայն իրաւամբ նմանեցուցանեմ արեղական, որ յարեւելից ելեալ տարածանիւրջ է զփայլուն ճառագայթս իւր մինչեւ ցօլորտս տիեզերաց: Այս պատճառաւ ես սուրբ սրտիւ բարձրացուցեալ զծեռս իմ ընդ Ձեզ ո՞վ բազմականք՝ աղաղակեմ ասելով « Կեցցէ՛ արթուն